

# ՐԱՅԹԻՆ ԱԽԵՏԻՍ ԱՀԱՐՈՒԵԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՄԵՐՃ ՄՐԱՊԻՌԵԱՆ

Բաֆֆին մեր գրականութեան փառքի  
կաղնին է - Անտիս Սիհրոննան

1924ին Բոստոնում լոյս տեսնող Հայոցնիք ամսագրում հրատարակ-  
ւում է Աւետիս Ահարոննեանի «Բաֆֆին ուսումնասիրութիւնը, որն աւելի  
շատ գրական-թննական դիմանկարի փորձ էր, բան հետազոտութիւն: Թէ էւ  
դիմանկարի փորձը նուիրուած էր Բաֆֆու մահուան 35ամեակին, կամ ա-  
ւելի ճիշտ՝ մատնանշւում էր այդ առիթը, բայց մղումը միանդամայն այլ  
էր: Բանն այն էր, որ մանուկ Հայաստանի՝ Առաջին Հանրապետութեան  
քաղաքական բախտի ինդիրների լուծման նախանձախնդիր, բայց արդէն  
վտարանդի գրողին ու պետական պաշտօնեային (նա, չնայած երկրում ար-  
դէն խորհրդային կարգերի հաստատմանը, շարունակում էր իրեն համարել  
Հայոց Ազգային Պատուիրակութեան նախագահը) լուզել էր ինչ-որ հայ  
«գրագիտուհու» (Ահարոննեանը վերջինին անունը դժբախտաբար չի միշտ  
տակում կարեւոր չհամարելով այն, քանի որ տուեալ ժամանակում նման  
ծայրայեղութիւնները եղակի չէին) կողմից ստորագրուած մի թուուցիկ, ո-  
րում առուած էր, թէ՝ «Ժայկական շարարաստիկ եւ արինուն հարցը այ-  
լևս գոյութիւն չունի»<sup>1</sup>: Ամենայն հաւանականութեամբ խորհրդային իրա-  
կանութեամբ պայմանաւորուած այս անհիմ ոգեւորութիւնը տակնուվայ  
է արել նուիրեալ գրողին, որն առհասարակ չէր ընդունում բոլլեւիկեան  
հասարակաբդը, որին համարում էր նաև ժամանակաւոր, անցողիկ իրո-  
դութիւն: Նա վերը յիշատակուած կարծիքը դիտում էր որպէս «ամբոխա-  
յին տիսմարութեան ախտանշան» (10, 342), որովհետեւ ժամանակի նկա-  
րագրի մասին ունէր իր յատուկ կարծիքը: «Մեր ցեղական ինքնութեան եւ  
իդեալի համար վտանգաւոր օրեր են, - գրում է նա: - Կանաց-կանաց կա-  
րող է խտանալ հասարակական մի հոգեբանութիւն, որի մընլորդում մի-  
այն բունաւոր բոյսեր են աճում զօրանում: Թշուառացած ամբոխները  
կատ տրամաքան են, եւ զազազուած բրամտորթիւնը հեշտութեամբ իր  
ցեղական արժեքները կը կրծուի» (10, 341-342, ընդգծումն իմն է - Ս.Ս.):

Զնայած 1924ին գեռ չէին սկսուել ազգային հոգեկերտուածքի, մասնա-  
ւորապէս՝ ազգի գաղաքարական նկարագիրն ապահովող մշակութային մի  
շարք արժէքների եղծումն ու հալածանքը, այդուամենայնիւ, գրողի իր իւ-  
րայատուկ բնագգով ու զգացողութեամբ Ահարոննեանն զգում էր, որ  
սկսուելու է նաև հոգեւոր սպանդն ու ոչնչացումը, ուստի եւ ըմբռնում էր  
դրանց կատարած ու կատարելիք դերի նշանակութիւնը: «Այսպիսի օրե-  
րում լաւ է մեր ցեղական մտքի շրեղ արգասիրները հրապարակ հանել  
պարտուած ազգի գրականութիւնը նրա անխոցելի գրահին է» (7, 342,  
ընդգծումն իմն է - Ս.Ս.):

Հասարակական մտքի, մասնաւորապէս հայ ազգային դաշտավարարանութեան ձեւաւորման մէջ Բաֆֆու գրականութեան խաղացած դերի գիտակցումն էլ ստիպում է Ահարոնեանին նորից բարձրացնելու նրա միջոցով ցեղի նկարագիրը խաթարումից փրկելու եւ կենառնակ պահելու արդիական հարցը:

Ասուածի ապացոյցն է ոչ միայն Բաֆֆու Մամուչչի պատմագէպը, այլև այն նպատակադրումները, որոնք վէպը գրելիս իր առջեւ գրել էր Բաֆֆին: Վէպի «Յառաջարան»ում մեծանուն վիպասանը ներկայացնում է պատմագէպի դերի մասին իր ըմբռնումները. «Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կեանքի նկարագիրն է: Նա պատկերացնում է իր մէջ, թէ որպէս ապրել է եւ որպէս գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարը, վարը, ստորոտիկները, պատկերացնում է նրա մտարու ու բարոյական յատկութիւնները, ներկայացնում է հնադարեան նարդուն իր բուն, նախնական կերպարանքով (ընդգծումն իմն է - Ս.Ս.), որը ժամանակի ընթացքում փոխուել եւ ներկայ սերնդի համար մոռացուել է»<sup>2</sup>:

Ասել է, թէ վիպասանի կարեւոր մտահոգութիւններից մէկը ներկայ՝ իր ժամանակի սերնդի յիշողութեան մէջ ժողովրդի՝ իր ցեղի անխաժար նկարագրի վերականգնում-վերահստատումն է, նոր ժամանակներում նրա մտարու ու բարոյական նկարագրի փրկութիւնը Յայտնի է Բաֆֆու դժգոհութիւնը մեր եւ պատմագրութիւնից, եւ պատմագիտութիւնից: Նրանցում գրողը չի գտնում, կամ չափազանց քիչ բան է գտնում, իր ցեղային նկարագիրը ներկայացնող: Եւ իր կարեւոր խնդիրներից է Համարում նաեւ ստեղծել մի այնպիսի վիպական շարադրանք, որում յատակ զանազանուած, տարբերակուած ներկայացուի իր ժողովրդի ցեղային նկարագիրը հարեւան ժողովուրդների նկարագրից. «Համարելով հայերին միեւնոյն ցեղին պատկանող եւ ոչ այնքան տարբեր կեանքով ապրող մի ժողովուրդ, որպիսին էին հին պարսիկները եւ մեղացիները. գրում է նա, - ես առել եմ շատ բան պարսիկների եւ մեղացիների կեանքից, իհարկէ, զանզանելով, ինչ որ ազգային առանձնայատկութիւն է եւ ինչ որ օտարամուտ է»<sup>3</sup> (ընդգծումն իմն է - Ս.Ս.):

Բաֆֆու այս նպատակադրումներին քաջածանօթ էր եւ դրանք ամբողջ խորքով հասկանում էր Ահարոնեանը: Աւելին. նրան շատ հոգեհարազատ էր նաեւ Բաֆֆու ըմբռնումը գրականութեան դաստիարակիչ դերի վերաբերեաւ, բայ որի՝ «... մեծ կրթողական ազդեցութիւն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է իր նախնեաց մեծազործութիւնները եւ աշխատում է հետեւել նրանց առարինութիւններին, տեսնում է նրանց նորորութիւնները, աշխատում է հետո պահել իրան նրանց կատարած սխալներից»<sup>4</sup>:

Եւ քանի որ Ահարոնեանը մեծ վտանգ էր տեսնում ցեղային ոգու նկարագրի աղաւաղմանը միտող բոլչեւիկեան գաղափարախօսութեան մէջ (աշխարհաքաղաքացիութեան/միջազգայնականութեան քարոզ, կրօնի (Հայմ) Համար ազգապահպան արժէք ունեցող) ու հաւատալիքների մերժում-ժխտում են), գրողի իր բնազդով գգաց նաեւ գալիք աղէտները վերը

նշուած արժէքները ներկայացնող գրականութեան դէմ. «Չեմ զարմանայ, - տագնապում է նա, - որ [բոլշևիկեան իշխանութեան] այս ցաւազար օրերում մեր ցեղական արժէքներից ամենամոլիրականը - մեր տոհմային գրականութիւնը դառնայ «Եշանակ նետին», ինչպէս այդ կատարում է Արարու ավելում խելայել կոյերի ճնորով։ Նոր ժամանակների Սնանակները ոչնչացնում, աղաւաղում, եղծում են հայ գիրն ու գրականութիւնը»։

Ահարոնեանը տագնապում է նաեւ, թէ բոլշևիկեան որումը կարող է տարածուել եւ սփիւրում, ուր ապրում էին Մեծ Եղեննից, այս դէպքում նաեւ բոլշևիկեան համաժանքից մազապուրծ հայութեան բեկորները. «Չեմ զարմանայ նաեւ, որ մեր գետնամած ու վիրաւոր հայրենիքի վրայ այսօր սուրացող ախտաւոր հողմերը եւ արտասահմանում համհարզներ գտնեն հոգիները ապականենու համար։

Այսպիսի օրերում լաւ է մեր ցեղական մտրի շրեթ արգասիրները հրապարակ հանել. պարտուած ազգի գրականութիւնը նրա անխոցելի գրահն է» (10, 342, ընդգծումն իմն է - Ս.Ա.): Այս մտահոգութիւնն է նախ եւ առաջ Ահարոնեանին մղում դէպի Մաֆֆին։

Մի այլ հիմնաւոր պատճառ եւս մղում էր Ահարոնեանին վերարձարձելու Բաֆֆու ազգային մտածողութեան խնդիրը։ Դա իր եւ Բաֆֆու Հոգեհարազատութիւնն էր, այն արտասովոր մերձաւորութիւնը, որ արուեստում յայտնի է իրեւ գրական նոյն դպրոցի ներկայացուցիչների, կամ, աւելի ճիշտ, գրական ուսուցչի եւ հետեւորդի կապ։ Իր թէ՝ գեղագիտական ըմբռուումներով, թէ՝ ստեղծագործական հնարաններով ու գաղափարներով, դաւանանքով, նաեւ գեղարուեստի նպատակագրումներով։ Ահարոնեանը հայ գրականութեան մէջ Բաֆֆու գրական գծի ամենաանմիջական եւ ուղղակի շարունակողն է։ Նրանց գեղարուեստական ժառանգութեան վրայ ամենաթուուցիկ ակնարկն անզամ դրա ապացոյցն է։ Բաֆֆին դեռ վաղ ըրջանի արձակ գործերում «Գեղեցիկ Վարդիկը», «Սով», «Կուսագրութիւն», «Անբախտ Հորիսիմէ», «Սպանդանոց», «Մի Օրավար Հող», «Բիրի Շարաբանի» եւն., ներկայացնում էր պարսկական տիրապետութեան տակ հեծող հայութեան անլուր տառապանքները, ասպա զրանց զուգակցում հայ մարդու անկոտորում կամքը, պայքարող ոգին ներկայացնող գործեր՝ Հարթեմ, Սայրի, մատնանշում ազատագրման ուղիներ՝ Զարալէջդղին, Խենթի, Կայծեր, Սամուէլ, Դաւիթ Բէկը եւն.։

Նոյնը, կամ գրեթէ նոյնն է նաեւ Ահարոնեանի մօտ։ Նրա վաղ շրջանի ստեղծագործութիւններում եւս ներկայացնում է թուրքական իրականութեան մէջ ապրող հայի գեհենական կեանքը՝ «Պուտըմ Կա՛թ», «Փշուրըմ Խա՛ց», «Խեղճները» շարքը ամբողջութեամբ ներկայացնում է հայ մարդու հերոսական նկարագիրը։ Այդ գաղափարը իրեւ գեղագիտական ծրագիր ակնառու է յատկապէս Ազատութեան Ճանապարհն ժողովածուում, Բաշիդ, Մըրիկի Սուրբը վէպերում եւ այլ գործերում։

Ճիշտ է, երբեմն Ահարոննեանի մօտ տառապանքի եւ պայքարի գաղափարները նոյն գեղարուեստական տիրոյթում զուգակցուած են, բայց դրանից Հարցի հութիւնը չի փոխվում:

Թափփու գերի քննութիւնը այս գէպքում նաև սեփական եսի ինքնութեան վերահաստատման միտումն ունէր: Բանաստեղծական խառնուածքով Ահարոննեանը կարծում է, թէ «ճշմարիտ վիպասանը նախ եւ առաջ բանաստեղծ է, այսինքն մարզարէ, տեսող, որ զգում է այն, ինչ խուսափում է հազարներից, տեսնում է այն, ինչ ծածուկ է սովորական մահկանացուի աշբերից» (10, 342): Հաւասարապէս եւ Թափփու, եւ իրեն բնութագրող այս կարծիքի առկայութիւնն էլ միանգամայն ճշմարիտ ու իրաւացի է դարձնում նաև զրոյի այն կարծիքը, թէ «կեղծ կլասիկ է զրոյը, բանաստեղծը, թէ՝ իրապաշտ, ումանտիկ, թէ՝ ընապաշտ կամ խորհրդապաշտ, այդ միեւնոյն է, բարական է, որ նա լինի անկեղծ և աստուածային բոցավառուղ հորին իր սրտում» (10, 343):

Հենց «աստուածային բոցավառուղ հորին իր սրտում» ունենալն էլ համարում է Թափփու զիմանոր առաւելութիւնը, որի առկայութիւնն էլ նրան դարձնում է բանաստեղծ-վիպասան: «Ասացի բանաստեղծ, զրոյն է Ահարոննեանը»: Արդարեւ, ոչ Թափփից առաջ եւ ոչ էլ նրանից յետոյ՝ ես չեմ զտնում որեւէ հայ զրագէտ, որի արծակը այնքան իսկական բանաստեղծական զոհարներ պարունակէր» (10, 344):

Ահարոննեանի այս կարծիքը այսօր կարող է տարօրինակ թոււալ, անգամ՝ պարզունակ: Մանաւանդ, եթէ նկատի ունենանք, որ Թափփին հայ զրականութեան մէջ ամենագաղափարապաշտ ու գաղափարախօս զրոյն է, շատ գէպքերում գեղարուեստը գաղափարին ստորագաստոց, որի մի՛շարք գործեր, մեղմ ասած, այսօր հնացած-հնառն են թւում: Բայց չմոռանանք եւ ժամանակը, եւ Թափփու դերը մի ողջ զրական սերնդի եւ հենց իր՝ Ահարոննեանի կեանքում, ու նաև այն, որ զրոյը մատնանշում է ուսուցչի ժառանգութեան իսկապէս բանաստեղծական կտորները՝ «Արարատեան Դաշտի Առաւոտը», Արաքսի նկարագրութիւնը, «Խշանաց Կղզին», «Պատմու Կղզին», «Արածանին» եւն: Միշ շարք ընդարձակ մէջբերումների կողքին, որոնք իր կարծիքով բանաստեղծական մտածողութեան արտացորումներ են, Ահարոննեանը դնում է հետաքրքիր մեկնարանութիւններ: Այսպէս մեկնարաններով Մամուչէ վէպի «Երկու Սուրբանդակներ» առաջին գլուխ ընութեան նկարագրութիւնները՝ նա պատահական չի համարում զրանց առկայութիւնը Երեւոյթը համարում է վիպական կառուցուածքային հնարանք՝ այն կապելով Թափփու գեղագիտութեան ձեւաւորման միջավայրի հետ: «Թափփին պարսկահայ է եւ արիական սովորութեամբ պարսկահայերը իրենց այգիների եւ պարտզաների մուտքի առաջ տնկում են վարդեր, որպէսզի այցելուն հենց սկզբից ծաղկի բուրմանքով արքնայ» (10, 345): Իրաւացի՞ է Ահարոննեանը իր համեմատութեան մէջ, թերեւս՝ այս:

Բանն այն է, որ Ահարոննեանը եւս ինչ-որ առումով պարսկահայ էր: Ինը, ճիշտ է, ծնուել էր Արեւելեան Հայաստանում՝ Իգդիր քաղաքին մերձ

Իգդիրմաւաւ գիւղում, բայց հայրը ոչ-շատ վաղուց դադթել էր հենց Պարսկաստանից՝ իր հետ բերելով Եւ քաղցր, Եւ դառը յուշեր ծննդավայրից:

Նաեւ փաստ է, որ Բաֆֆին յաճախ է բուն ասելիքը ներկայացնում բնութեան խորհրդաւոր, երբեմն նոյնիսկ կիսադիցական պատկերների զուգադրութեամբ՝ դրանց համախորքում, որը, թերեւս, իսկապէս կապուած է նրա՝ ծննդավայրով պայմանաւորուած մտածողութեան հետ: Այսպէս. երբ նկարագրում է Սամուէլի այցը մօրը՝ Տաճատունուն, Բաֆֆին ներկայացնում է իշխանազնի հագուստի գրեթէ բոլոր մանրամասները՝ դրանց վերագրելով մողական ազգեցութիւն, իսկ մօր եւ որդու հանդիպման պատկերում Սամուէլի հեգնանքը մօր պճնասիրութեան հանդէպ զուգակցում է նաեւ նրա զարդարանքի դիցական նշանակութեան ընկալումների մեկնաբանութեամբ: Սամուէլի խօսքով. « Այ մատանին կարմիր եադութի (յակինթ - Ս.Ս.) քարով ամէն մարդկանց մօտ հաճելի կ'ան քեզ: Այդ միսոք՝ սարդիոնի (սէլլան) քարով՝ փարատում է արինահեղորիսինը: Այդ երրորդը՝ փարդազոյն ստատակի (լար) քարով՝ փարատում է վշտեր և հալածում դեւերին: Այդ չորրորդը՝ խայտաճանուկ օճաքարով՝ բոյների ներգործութիւնը ոչնչացնում է: Այդ հինգերորդը՝ հակիկի դեղնազոյն քարով՝ ոչնչացնում է մարդկանց շար մտքերը»<sup>8</sup> (ընդգծումները եւ բացատրութիւնները՝ հեղինակինն են - Ս.Ս.):

Ահա թէ ինչու է Ահարոննեանը Բաֆֆու վիպասանութեան մի կարեւոր արժանիքն ու գրաւչութեան գաղտնիքը համարում է բանաստեղծականութիւնն ու նկարագրական վարպետութիւնը:

Հայ գրականագիտութիւնը Բաֆֆու ստեղծագործութեան քննութիւնը կատարելիս առաւելապէս ծանրացել է նրա դաղափարական որակների վրայ՝ իրեւ առաւելութիւն նոյնպէս շշշելով նկարագրական արուեստը: Քիչ, գրեթէ աննկատելիութեան աստիճանի քիչ է խօսուել նրա երկերի, մասնաւորապէս Շամուէլի հոգեբանական որակների մասին: ԽՍՀՄ գոյութեան առաջին տասնամեկներում Բաֆֆու եղծումն ու արգելանքը շատ չափով նոյնպէս պայմանաւորուած էին նրա դաւանած ազգային գաղափարանութեան ցցուն արտայայտուածքով: Նոր ժամանակներում արդէն Բաֆֆու երկերի դէմ արշաւանք սկսեցին այսպէս-կոչուած նէօազգայնականները եւ նէօմորավայտները՝ մեծ գրողնին մեղադրելով քաղմաթիւ անհեթեթ իրզութիւնների, մասնաւորապէս պաշարոյականութիւն քարոզելու մէջ<sup>9</sup> (նկատի էր առնւում Սամուէլի՝ ծնողասպանութեան դրուագը, որի մասին՝ քիչ ներքեւում):

Ահարոննեանը Բաֆֆուն ոչ-պակաս չորհայի է համարում «անհատական հոգեկան վիշտը նկարագրելիս» (10, 347): Իր ասածի ճշմարտացիութիւնը փաստում է մի շարք դրուագների մէջքերումներով, որոնց միջոցով էլ ... համոզում է: Այսպէս, նշերով, որ Բաֆֆին «անպանոյն քաներով Որմիզդուխտ տիկնոց անյոյս մննակութեան եւ յուսաքեկ, զարդուած զոյտքեան պատկերն է տալիս» (նոյն տեղում), Ահարոննեանն առանձնացնում է իսկապէս Բաֆֆու՝ իրեւ հոգեբանի որակներն հաստատող մի

Հատուած. «... լինում են այնպիսի բռակներ, երբ սրտի եւ դատողոքեան փոխադարձ յարաքերութիւնները խօսում են և մարդու ինքն իրան հաշիւ տալ չի կարողանում իր անվերլուծեի զգացմունքների մասին» (10, 347).

Բաֆֆու հետ հոգեհարազատութիւնը, նրա գործի երկարամեայ շարունակողը լինելու հանգամանքն էլ Ահարոնեանին հսարաւորութիւն է տուել վիպասանի մօտ նկատել որակներ, որ նրանից առաջ եւ յետոյ էլ շատշատերը չնկատեցին կամ չուզեցին նկատել: Նա պարզապէս համոզուած է, որ «Մաֆֆին զիտէ զննել մարդկային հոգին եւ նրա զաղտնախորհուրդ ծալքերը բացել» (10, 348) եւ ընթերցողի ուշադրութիւնը բեւեռում Բաֆֆու վէպից առնուած հետեւեալ հատուածի վրայ, ուր նկարագրուում է Որմիգուխա տիկնոց «անյոյս մենակութիւնը». «Յանկանում էր խօսել, ցանկանում էր թերեւացնել ամքարուած Վշտերը: Դարձեալ ոչ ոք չկար: Միակ առարկան, որ փոքր ի շատէ կենդանուրեան նշոյլ էր ցոյց տախի, եր ճրազը, որ վառում էր արծարեայ աշտանակի վրայ: Երկար նայում էր նրա վրայ եւ նտրով խօսում էր նրա հետ: - Հոտ, ջերմութիւն եւ նիր - ինքն իր մէջ այրում էր, ինքն իր մէջ սպասում էր... Այսպէս էր եւ նրա սիրտը: Ահարոնեանը, ինչպէս բնորոշ է իսկապէս հոգեկից գրողին, հասկանում եւ սպառիչ բնութագրում է իր ուսուուցին. «Այրուղ ու սպասուող լոյսի եւ մխացող սրտի մնանութիւնն այստեղ բարձր բանաստեղծական համեմատութիւն է եւ ամբողջ այս պատկերը ամեն նարդու մննութեան, անյոյս մննութեան կսկիծն է, երբ հոգին այնպէս կարօտ է սփոփիչ մի խօսքի, մի ծայնի, երբ նա փարում է նոյնիսկ անշունչ առարկաներին, նրանց մէջ կեանք, հոգի, կարեկցութիւն դնելով» (10, 348 ընդգծումն իմն է - Ա.Ա.):

Ինչպէս նշուեց, Ահարոնեանը Բաֆֆուն համարում էր բանաստեղծ՝ «այս բանի ամենալայն առումով» (10, 349): Բնութեան փոթորկոտ պատկերների կողքին նա մէջբերում է երկրի եւ նրա մարդկանց՝ վտանգի ահց ծնուած հոգեկան փոթորկումների մի քանի պատկեր՝ եզրայանգեկիով, որ «Հոմերոսեան շոնչ ունի Բաֆֆին ամրոխի այդ տարերային, մրրկաշունչ խոռվը նկարագրելիս» (10, 349), եւ թուում է՝ ընկնում է չափազանցութիւնների մէջ: Սակայն զա թուացեալ չափազանցութիւն է՝ պայմանաւորուած իր՝ Ահարոնեանի գեղագիտական ըմբռնումներով, քանի որ համոզուած է ու պնդում է, որ «Մաֆֆին մարդկային կրթերի փորորկից, որի անունը կեանք է, ամենեն հզօր կիրքն է ընտրել նիր իր ստեղծագործութեան՝ ազատութեան աննկտն տենչը ու նրան կապուած պայքարի մէջ արդութիւնը, ասպետութիւնը, առարինութիւնը, անձնութիւնը, որոնք մեր ողբալի ու դժիսն գոյութեան միակ գարդերն են սիրոյ հետ» (10, 372): Եւ այս համոզունքն էլ գրողին թոյլ է տալիս փաստելու, թէ՝ «Ես դիտմամբ մասնաւորապէս կանգ առայ Բաֆֆիի բանաստեղծական կարողութեան վրայ, - գրում է նա, - նախքան նրա վիպերգութեան անցնելը, որովհետեւ, ըստ իս, հնարաւոր է բանաստեղծ լինել առանց վիպագիր լինելու, բայց անհնարին է երեւակայել մի իսկական վիպասան առանց բանաստեղծական խոշոր տաղանդի» (10, 350, ընդգծումն իմն է - Ա.Ա.): Իսկ Սամուելը ոչ միայն Բաֆֆու եւ առհասարակ հայ պատմավիպասա-

նութեան դասական, գլուխգործոց-ուսուցանող վէպն է, այլեւ գրական այդ մարզի մէջ այնքա՞ն հազուագիւտ հոգեբանական անցումներով հարուստ ու խիս գործերից մէկը: Սա իր հետազօտութեան մէջ բազմիցս է շեշտում Ահարոնեանը: Ահա՝ ինչու է կանգ առնում Բաֆֆու Մամուչի վրայ, որի ստեղծումը կապում է միմիայն Բաֆֆու «խոշոր տաղանդի, նրա զարմանալի հարուստ երեակայոթեան, նրա գրական հոտառութեան, պատմագրի անվիճելի կարողութեան» հետ (10, 351):

Ահարոնեանը հրաշալի է ըմբռնել հեռաւոր Դ. գարի փոթորկոտ քաղաքական կեանքի գրեթե բոլոր դրսեւորումները՝ կապուած ոչ միայն զուտ առարկայական իրողութիւնների հետ: Եւ դա անում է ոչ միայն սոսկ Բաֆֆու վէպի օգնութեամբ: Իր ապրած ժամանակը շատ չափով լիշեցնում էր Դ. գարը, իսկ ինքը այդ ժամանակի (ԺԹ. գարի վերջի եւ Ի. գարի սկզբի) ականատեսն էր, մասնակիցն ու կերտողը, որ կրում էր ճակատագրի պարտադրած խաչը՝ գրողից վերածուելով քաղաքական գործի, փորձելով լուծումներ գտնել յաճախակի փակուղիներում յայտնուող հայ քաղաքական իրողութիւնների համար, ինչն էլ նրան հնարաւորութիւն է տախի գրեթէ բաֆֆիական «սրատեսութեամբ, իսկական մարզարէի պէս մատը միշտ վերքի վրայ» դնել: «Հին ցաւ է այս, - իր, նաեւ Բաֆֆու պատկերած ժամանակներն է ընութեագրում Ահարոնեանը, - որ կրծել է մեր պատմական կառոցուածքը, ցեղակա՞ն ասեմ, թէ՝ անհատների աւերիչ նորութիւն, որ որպէս մի քշուա ատախզմ բոլոր դարերում, բոլոր մնացած ազգային կրիզներին երեւան է զայիս ամեն անզամ, երբ ազգը իր կորովի, իր արիութեան, իր զաղափարական ու ֆիզիկ միութեան հրամայական պէտքն ունի իր գոյութեան սպառնացոյ ահարկու վտանգը դիմագրաւելու» (10, 352): Հենց արտաքին իրողութիւնների թելարանքով ծնուած հոգեբանական բարդ միթոլորտի ու մարդկային հակասական հոգեկերտուածքների վարպետ պատկերումներն են գրաւում Բաֆֆու վէպում Ահարոնեանին: Նա իր մանաւանդ համեմատական գնահատումներով գնում է թուացեալ չափազանցութիւնների: «Գրչի մի վարպետութեամբ, որ պատի կը բերէր համաշխարհային գրականութեան լաւագոյն վարպետին անցքերը զարգանում են տրամաբանօրէն, յաջորդաբար, դաւադրութիւնն ու ուրացում մի կողմից եւ ընդդիմադիր, զաղափարական շարժումը միևս կողմից» (10, 352-353, ընդգծումն իմն է - Ս.Ս.):

Ահարոնեանի հիացումի մէջ պակաս դեր չի խաղացել եւ այն, որ, ինչպէս նշուեց, նա, Բաֆֆու ամենամերձաւոր գրչակիցը ու հետեւորդը լինելով, չհասաւ Բաֆֆու գեղարուեստի թէ՛ զաղափարական եւ թէ՛, մանաւանդ, կայացման կատարելութեանը: Բաֆֆին մշտապէս մնաց նրա ուսուցիչն ու կուռքը՝ իրեւ անվերջ կատարելութեան մղող հիմնական ազդակ:

Սակայն աշքառու է նաեւ, որ Ահարոնեանի մի կարեւոր ըմբռնումով է պայմանաւորուած նրա չափազանց հիացումը: Նա կենսական եւ գեղարուեստական ճշմարտութիւնների մասին ունի այն նոյն պատկերացումը, որ ժամանակին Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործութիւնը գնահատելիս արտայայտել է Վ. Բելինսկին, ըստ որի՝ «Պուշկին ինքը կեանըն է. աւելին՝

պղեգիայում կեանքն աւելի կեանք է, քան բուն կեանքում», Նշենք, որ Բեյլիսկու ըմբռնմամբ պանդիան գրականութիւնն է առևասարակ. Գրեթէ նոյն կարծիքն ունի նաև Թումանեանը. «Բանաստեղծութիւնը կեանքի արտայայտութիւնն է կամ աւելի լաւ է ասել, ինքը կեանքն է: Այդ դեռ քիչ է, քանաստեղծութեան մէջ կեանքն աւելի կեանք է, քան թէ իրականութեան մէջ»<sup>10</sup>: Ինչպէս երեւում է, Թումանեանը կրկնում է Բեյլիսկուն, ամբողջութեան մէջ ընդունում է վերջինիս կարծիքը: Ահարոնեանը ծանօթէ է եղել Բեյլիսկու կարծիքին, թէ՝ չական չէ: Բայց յայտնի է, որ նա Թումանեանի հետ բաւականին մտերիմ յարաբերութիւնների մէջ էր, արտասահմանից նամակներ էր գրում նրան, յաճախ գրական հարցեր էին քննարկում: Երան հոգեհարազատ էր Թումանեանի մտածողութիւնը, եւ պատահական չէ, որ Ահարոնեանը եւս նոյն կերպ է մտածում: Նա վէպը՝ իրեւ ժանրածեւ, ընութեազրում է հետեւեալ կերպ: «Աւսպր ընդիանը ապահով իրկցիա է, հեղինակի հարուստ երեւակայութեան արգասիք. Եւ այդ ֆիկցիայի գեղեցկութիւնն ու հետաքրքրութիւնը նրա պարունակաղ ճշմարտութիւնն է, որ յաճախ իր փայլով ու օրութեամբ զերազանցում է կեանքին, որուելից նա առնուած է» (354, ընդգծումն իմն է - Ս. Ա.):

Ահարոնեանն աւելի է յատակեցնում արուեստում կենսական ճշմարտութեան պատկերման կարեւորութիւնը, աւելի ճիշտ՝ շշուում է գրողի երեւակայութեան նշանակութիւնը: Նա «... ստեղծագործութեան դիրիչ զադանիքը, համարում է այն, որ, - ... այդ հիստածքը (գրական նիւթը - Ս.Ա.) իրականութիւնից առնուած, բայց ֆիկցիա է, ճշմարտապատում է, քայլ երեւակայական ու աւելի իրական քան կեանքը» (10, 354, ընդգծումն իմն է - Ս.Ա.): Այստեղից էլ գրողի զերի՝ իրեն իրայատուկ ըմբռնումը, թէ՝ «Սնձ գրագէտներին է յատոկ միայն, կեանքից առնելով նիւթը այնպէս նշակել, յատակել, տարրալուծել ու վերստին ձեւակերպել, որ ստեղծագործութիւնը զերազանցի կեանքը եւ արուեստի ընութիւնը իր իրապայրներով կախարդի ընութեան պատկերների սովոր մեր հայեացըները» (10, 354, ընդգծումն իմն է - Ս.Ա.): Նա Բաֆֆուն համարում է հենց այն մեծ գրագէտը, որ զերազանց է լուծում արուեստի եւ իրականութեան փոխյարաբերակցութեան խնդիրը, եւ դա այն փաստարկմամբ, որ մեծ գրողը կանգնած էր աւելի գժուարին կացութեան առջեւ, քան ցանկացած այլ գրող, քանի որ Բաֆֆին... պատմավիպասան է: Ահարոնեանը իրաւացիօրէն ժամանակակից կեանքը ներկայացնող վիպազրի գործն աւելի ճիշտ է համարում, քանի որ համոզուած է, թէ «Պատմական վեպի ֆիկցիան շատ աւելի դժուարին է եւ երեւակայութեան ու արուեստի աւելի մեծ քափ ու կորով է պահանջում, - որովհետեւ, - ժամանակակից իրականութիւնից առնուած նիւթը մատակարարում է հարուստ շաղախ, վարպետի ընահաճ ու քազմազան ծեակերպումների հանար, պատմական վեպի հեղինակը կաշկանդուած է անցեալի տուած ցուցումներով, պատմութեան սահմանած փաստերով, աւանդութեանց, զրոյցների, հերիխանների զծած խառնուածքներով, ընաւորութեամբ ու կամքերով» (10, 354): Նա պատմավիպասանի գործը համեմատում է «երկրաբան կենդանաբանների» գործե-

րի հետ, որոնք որեւէ «անյայտացած կենդանու մի հատիկ ուսկրով կարողանում են վերականգնել մի ամրող կմախը, մի ամրող կենդանի» (Առջ):

Բաֆֆու՝ իբրև անուրանալի ճիրքի տէր գրողի, գաղափարախօսի եւ ուսուցչի դերի, նրա գործի անսովոր բարդութեան զիտակցումն էլ Ահարոնեանին մղել է մեկնարանելու վէպի հիմնական առեղծուածի՝ ծնողասպանութեան թնջուկը: Վերն արդէն նշեցինք, որ Բաֆֆու վէպին Ահարոնեանի անդրադարձը պարմանաւորուած չէր սուկ վիպասանի մահուան 35ամեայ տարեկցով: Որ դա սուկ առիթ էր միայն: Աւելի ծանրակշիռ դեր այս բանում, անշուշտ, ունչը Բաֆֆու գրականութեան, նրա գաղափարաբանութեան հնարաւոր հերքումը խորհրդացին իրականութեան մէջ, ինչը իր հետ կարող էր բերել անցանկացի շատ հետեւանքներ, քանի որ Բաֆֆին շարունակում էր սերունդների դաստիարակողի իր վիթիսարի դերը, ինչը Ահարոնեանը հրաշացի գիտակցում էր: Բաֆֆու դերի նսեմացման հիմք այն ժամանակներում (ինչպէս եւ հիմա) կարող էր իսաղալ ծնողասպանութեան դրուագը՝ իբրև հիմնական գաղափարի հաստատման միջոց:

Վէպի այս հիմնախնդիրը, նրա հրապարակման օրից սկսած, ստացել է ամենատարբեր մեկնութիւններ՝ հիացականից, անվերապահ ընդունումից մինչեւ նրա ժխտումը: Վէճն այսօր էլ շարունակուում է: Սամուէլի արարքն այսօր էլ շատերի կողմից համարում է ոճրագործութիւն, ապարարոյականութեան քարոզ, եւ այս առումով՝ վնասակար: Ահա՝ այս իրողութիւնների գոյութեանմը են Բաֆֆու վէպի հիմնախնդիրին Ահարոնեանի տուած մեկնութիւնները շարունակում մնալ անհրաժեշտ եւ արդիական: «Ծնողապանորինը ինչ պայմաններում եւ լինի, անհնարին դաժան նիր է զեղարութեասի համար. այս հրէշատը, հակաբնական ակտի սարստի տակ արդիսաց հեշտորեամբ կարող է դառնալ զգուծ, անհրապոյր ու վանիշ» (10, 356):

Ահարոնեանը քաջատեղեակ է համաշխարհացին գրականութեանը եւ նրանում չշատափուած նմանատիպ ինդիրներին՝ սկսած դեռ յունական դասական ողբերգութիւններից: Եւ, չնայած Բաֆֆու հանդէպ ունեցած անթաքոյց հիացմունքին, յտակօրէն գիտակցում է եւ համոզուած է, թէ՝ «Անշուշտ» Բաֆֆին ո՛չ Սոփոլիս է եւ ո՛չ մանաւանդ Ծերսալիր», նոյնիսկ այնքան, որ թւում է, թէ երկնչում է համաշխարհացին մեծութիւնների փառքից՝ նրանց համեմատութեան մէջ գտներլով, որ «Ժրաւ է, որ նրան (Բաֆֆուն - Մ.Մ) պակասու է փիլխոփայական վերլուծող մտածումը, մարդկային անհատական հոգու մէջ տիեզերքը տեսնելու կարողութիւնը, որ շատ քիչ հեղինակների է տրուած» (10, 359), սակայն առանձնացնում եւ ներկայացնում է Բաֆֆու վէպի մի շարք տարբերութիւններ, որ մզւում են առաւելութեան:

Ներկայացնելով Սոփոլիսի հզիպոսը Կոլոնում եւ Անտիգոնէ ողբերգութիւնները՝ Ահարոնեանը իրաւացիօրէն էղիա արքացի գրաման համարում է ճակատագրով պարտադրուած, կոյք դիպուածների թելադրանք, ինչի պատճառով էլ նա գառնում է մալրապիղծ ու հայրասպան: Այլ կերպ՝ էղիպը զոհ է աւելի, քան մեղագործ, եւ այս պատճառով էլ Սոփոլիսի

գործը հոգերանօրէն աւելի մարսելի է ու ընդունելի «Առանց Fatum-ի, այսինքն զերբարական էլեմենտի օգնութեան, հազի թէ Սոֆոլիս, անգամ իր ահազին տաղանդով, կարողանար դրս զալ այս դժուարին առեղծուածից» (10, 357)՝ գրում է ԱՀարոննեանը, եւ այս առումով՝ կարծես համոզիչ է նրա փաստարկը: Գրեթէ նոյն մեկնարանութիւնն է նաև Շեքսպիրի Համ-լիտի առումով: Նկարագրելով ոճրագործութեան պարտադրանքի առջեւ յայտնուած Համլէտի հոգեկան տուայտանքների շեքսպիրեան պատկերները՝ ԱՀարոննեանը փաստում է, որ բոլոր ներկայացուած «առարկայական տուեալները» բաւարար չեն, ուստի «Շեքսպիրը աշխարհ է կոչում եւ Համ-լիտի սպանուած հօրը, որի գունաստ եւ ահարկու ստուերը սպառազինուած յայտնուում է որդու աշքերի առջեւ եւ մարդկային ձայնով՝ վրեմինորութիւն պահանջում, դարձեալ զերբնական էլեմենտ, որ զախս է քափ տալու ծնողասպանի բազուկին, նրա հոգին մկրտելու, նրա կամքը գօրացնելու» (10, 358, ընդուռմն իմն է - Ս.Ս.): Փաստօրէն, ԱՀարոննեանը ոճրի հանդէպ, իրեւ իրողութեան, հասարակականօրէն միանդամայն տարբեր ըմբռնուում ունի, որի գիրքերից էլ շարունակում է քննել Ռաֆֆու վէպը:

Ընդհանուր առմամբ միշտ ներկայացնելով ոճրի եւ պատժի փոխկապուածութեան փիլսոփայական խորհուրդը՝ ԱՀարոննեանը, թւում է, վրիպում է Ռաֆֆուն ներկայացնելիս: Ճիշտ է, որ «Սամուէլի հայրասպան խորհի գալարումները այնքան հզօր չեն, որ քարձրացնելին նրան մինչեւ զերբնականը ու դասնային տիեզերական տանջանք» (10, 359), սակայն արդեօ՞ք սա հիմք է կարծելու, թէ՝ «Սա Ռաֆֆու մեծագոյն թերութիւնն է, ինչպէս եւ իր գործի» (10, 359):

Ամէնից առաջ ինքը՝ ԱՀարոննեանն էլ նկատում է, որ «Ռաֆֆին չի մոռանում անհատը եւ նրա դժոնդակ ներքին ապրումները» (10, 359), սակայն «մոռանում է», որ Ռաֆֆին իր հերոսին ձգտում է ներկայացնել անհամեմատ իրական, քան գերբնական իրողութիւնների մէջ: Դա, ըստ երեւոյթին, պայմանաւորուած է հենց Ռաֆֆու գեղագիտական ըմբռնուումներով: Որքան էլ որ վէպում նշուած փաստն առկայ է, Հայրենասիրական ոչ մի վերացական զգացում չի կարող մարդուն, մանաւանդ ոգեղէն կրթութիւն ստացած մարդուն, ինչպիսին Սամուէլն է - անգամ եթէ նրան նախ իրեւ հայրենասէր են դաստիարակել, ապա ծնողասէր, անգամ եթէ նա շարժուում է հօր աւերածութիւնների ու ոճրագործութիւնների յետագծով - մղել ծնողասպանութեան: Սա լաւագոյնս գիտակցում է հենց Ռաֆֆին:

Սա է պատճառը, որ Սամուէլի՝ հօրն անպայման հանդիպելու, նրան տեսնելու ձգտումը սպաներու նպաստակ չէր հետազնդում: Եթէ կ'ուզէ՝ սպանելու միտքը ամէնից աւելի սարսափեցնում էր հենց նրան՝ Սամուէլին, որ ամէն վայրկեան վանում է իրենից արդ սարսափը, հենց որ այս յայտնուում է: Նա կոպիտ է խօսում Մեսրոպ Մաշտոցի հետ, երբ վերջինս հեղնուում է Վահան Մամիկոնեանին, նա Աշխէնի մօտ խոստովանում է, որ տակաւին սիրում է իր հօրը՝ չնայած վերջինիս ոճրագործութիւնների հետեւանքներն արդէն տեսել էր, եւ միայն ա'յն ժամ, երբ Աշխէնը համոզուած պնդում է, թէ հայրը իր նպատակին հասնելու համար կը զոհի եւ որդուն,

Սամուկը մտքում առաջին անգամ՝ ինքն իրեն ասում է, թէ «Այն ժամանակ ես եւ չեմ խնայի...»<sup>11</sup>,

Ինչպէս նշեցինք, Ահարոննեանն անշուշտ իրաւացի է, երբ Բաֆֆուն չի համարում նոր Սոփոկլէս կամ Շեքսպիր: Սակայն պատահական չէ, որ Համլէտի արարքի գնահատման համար գտնում է ամենահամոզիչ բացատրութիւնը՝ կենտրոնանալով Հոգեբանական բացայայտումների պատկերների վրա: «Ծերսապիր նոյնպէս երկիրդած սարսափով է մօտենում (ընդգծումն իմն է - Ս.Ս.) այս նիրին. նրա հերոսը, Համլէտ, օրեր շարաբներ և ամիսներ դողդուում է իր անելիքի (ընդգծումն Ահարոննեանին է - Ս.Ս.) մոր խորիրոյի առաջ (ընդգծումն իմն է - Ս.Ս.) ձեռքը սրին է շարունակ, բայց հոգին ընկրկում է ու լալիս խաւարի առջև սրբութացող երեխայի պէս» (10, 357):

Ահարոննեանը առանձնացնում է վէպի հենց այն տեսարանները, որոնցում ներկայացուած են «մոր խորիրոյի առաջ» յայտնուած հերոսի տուայտանքները (10, 359-361), որոնց նկարագրելիք, ինչպէս իրաւացիօրէն նկատում չ' «... հետինակը իր հերոսի հոգեբանական ճշգրիտ կենդանազիրն է» (10, 362): Նոյնքան իրաւացի է նաև, երբ, Համեմատելով Համլէտի եւ Սամուէլի իրավիճակները, նշում է զրանց տարբերութիւնները եւ գտնում թէ «Եւ այս է, որ [ի տարբերութիւն Համլէտի,] Սամուէլի աշքի առաջ ոճիրը կատարում է ամէն օր, մաս-մաս, կամաց-կամաց, իր հայրենիքի դեմ նիրուող դադի թելերը զիտ, հօր արարեներից ծագող վշտին զուգընքացարար նրա հոգին բռնուած է եւ քաղաքական հոգսերով», որ «նրա (Սամուէլի - Ս.Ս.) հոգեբանական կացութիւնը դարձնում է աւելի քարդ ու հետինակի գործն աւելի դժուարին» (10, 362):

Դժբախտաբար Ահարոննեանը չի նկատել կամ չի կարեւորել Սամուէլի կերպարաստեղծման, մեր կարծիքով, մի շատ, թերեւս ամենակարեւոր հնարանքներից մէկը, որ կիրարկել է Բաֆֆին: Նկատի ունեմ ահա թէ ինչու կասկածից վեր է, որ Բաֆֆին հրաշալի զիտէլ Ս.Գիրքը: Այնտեղ ծնողորդի փոխյարաբերութիւններում սէրն ու կապուածութիւնը ունեն աւագից կրտսեր, ծնողից զաւակ անշընթիլ ընթացք, այսինքն՝ ծնողն անհամեմատ ուժեղ, անխորտակ կապուածութիւն ունի դէպի զաւակը, իսկ հակառակ ուղղուածութիւնը թողը է, որն էլ ապահովում է մարդկութիւնն կենսական առաջընթացը: Պատահական չէ, որ որդիներին է յանձնարարուում թողնել ծնողներին՝ կեանքի յաւերգութիւնն ապահովելու համար: «Սորա համար մարդը կը բողէ իր հայրը եւ իր մայրը, եւ կը յարի իր կնոջը, եւ մէկ մարմին կը լինին» (Ծննդոց, Գլ. Ա., 24): Նաև պատահական չենք համարում այն, որ Սամուէլն առաջին անգամ Աշխէնի մօս է ինքն իրեն խոստովանում, որ շինայելու դէպքում ինքն էլ չի խնայի: Այսպիսով, Սամուէլը շարժում է Աստուածաշնչի պատուիրանի համաձայն՝ աստիճանաբար խորթացող ծնողներից հեռանալով՝ յարում է իր նման «կատաղօրէն հայրենապաշտ» կողը, նրա հետ ձգտում է գառնալ մէկ մարմին, զի կեանքը այդուհետ նրանով է իմաստաւորուելու, նրա հետ է մէկ մարմին զառնա-

լու: Սա, կարծում ենք, իբրև սիւժէտային կառուցուածքի ձեւ պատահական չի ընտրուած: Ահարոնեանի բնութագրմամբ «Կատաղօրէն հայրենապաշտ» լինելուց զամ՝ Սամուէլը նաև մարդ է, ու ոչինչ մարդկային խորթ չէ նրան: Ուստի եւ այնքան էլ Համոզիչ չեն թուում Ահարոնեանի այն պնդումները, թէ «Սամուէլի հայրասպան խոնջի զալարումները այնքան հզօր չեն, որ բարձրացնեն նրան մինչեւ զերբնականը ու դատնային տիեզերական տանջանք» (10, 359): Մինչեւ գերբնականը՝ գուցէ, բայց «տիեզերական տանջանք» դառնուում են, եւ այն էլ ինչպէս: Բաֆֆին, ճիշտ է, չի ներկայացնուում հերոսի հոգեկան տոււայտանքներն ու ապրումները, նրա տառապանքը, բայց նաև դրանք չի շրջանցուում: Սամուէլի՝ Ողական ամրոցից դուրս գալուց մինչեւ հօրն հանդիպելը անցնուում է մէկ տարուց աւելի ժամանակ, եւ զա գրողը ներկայացնուում է ոչ առանց յատուկ դիտաւորութեան: Ոչ էլ, մանաւանդ, միայն այն նպատակով, որ հայրենիքի աւերածութիւնների եւ հօր գործած ոճիրների ազգեցութիւնը Սամուէլի վրայ ցոյց տալով՝ Համոզիչ գարձնի Հայրասպանութեան ոճրագործութիւնը:

Բաֆֆուոց լաւ թերեւս ոչ ոք չէր կարող ըմբռնել, որ միայն հօր արարքները բաւարար չեն հոգեբանորէն Համոզիչ գարձնելու նման աներեւակայիցի ոճնրի արդարացիութիւնը: Ուստի եւ նա, ճիշտ է ժլատ խօսքերով, պարզ պատումի միջոցով, բայց Համոզիչ ներկայացնուում է այն աշաւոր տառապանքն ու հակասական ուժերի բախումը, որ ապրել է Սամուէլը, մինչեւ հենց իր Համար զաժան վճռի ընդունումը: «Բայց նա (Սամուէլը - Ս.Ս.) այդ ժամանակամիջոցուն բոլորպին անգործ չի: Նա դարձեալ պատերազմի մէջ էր,- մի ներքին, բարյական պատերազմի մէջ, որ կատարում էր նրա սրտում, եւ որ աւելի սարսափելի էր, քան զենք ու զրահի արհակըրը: Նա կուտս էր իր խոնջի հետ եւ իր սրտի հետ. Վերը էր տալիս եւ վերը էր ստամում: Այդ հարուածներին շիմնացաւ մասնուկ սիրոց, մինչեւ, վերջապէս, նրան հիանդորթեան մահին մէջ դրեց»<sup>12</sup> (Ընդգծումներն իմն են - Ս.Ս.):

Այս տեսական ու տառապալից ապրումներից Սամուէլը դուրս պիտի գար, բնականարար, աւելի ամրապնդուած ու կորովի, եւ այս դէպքուում արդէն դժուար է բանափիճել Ահարոնեանի հետ, որը պնդուում է, թէ «Օափքին չի նոռանում անհատը եւ նրա դժնակալ ներքին ապրումները» (10, 359): Ահարոնեանը յստակօրէն տեսնուում է իր մեծ նախորդի եւ ուսուցչի գլուխ գործոցի լոյն ու ստուերը ծիշտ է, ոչ-բորոր մանրամասներն է քննում, բայց եզրայանգումներից կարելի է մակարերել, որ ոչինչ անհասկանալի չի մասցել գրողին: Նորից շեշտենք թուումնեանի նման Ահարոնեանն էլ ունի գեղարուսատական ճշմարտութեան իր լմբռնումը, որ գրեթէ նոյնական է թուումնեանի ըմբռնմանը: «... ստեղծագործութեան դիրիջ զալունիքը նրա մէջ է որ այդ հիսուածը իրականութիւնից առնուած, բայց ֆիկցիա է, ճշմարտալատում է, բայց երեւակայական ու աւելի իրական քան կեանքը» (10, 354):

Այս դիտանկիւնից, ահա, կեանքից աւելի ճշմարտապատում է թւում Հօր սպանութեան տեսարանը: Բնութիւնը, կեանքը կարծես հաստատում են ծնող-զաւակ կապի վերը նշուած սուրբ-գրային ճշմարտութիւնը: Աւելի ճիշտ Ս. Գիրքը հաստատում է Բնութեան ճշմարտութիւնը: այն է՝ այդ կապի առաջնութացիկ էութիւնը անհնար է դարձնում ծնողի՝ զաւակին մերժելու, ուրանալու իրողութիւնը, մինչդեռ հնարաւոր է հակառակը: Այլ կերպ՝ կը խախտուի տիեզերական ներդաշն ընթացքի մի կարեւոր բան, ինչ-որ հաստատուն արժէք, գուցէ եւ՝ Բանի էութիւնը: Սա գիտակցել է Ռաֆֆին: Կարծես ցրելու համար բոլոր տարակոյնները եւ կարծես իրեւ պատասխան գալիքի հնարաւոր մեղադրանքներին եւ կեղծ բարոյականութեան քարոզիչներին՝ նա սպանութեան տեսարանը կառուցել է Բնութեան եւ Աստծոյ օրէնքների խամբարուած յաջորդականութեամբ:

Քանի որ շատ յայտնի է, ուստի աւելորդ է ներկայացնել արտասովոր գրամատիզմով յագեցած գեղարուեստական այդ կոթողային պատկերը՝ Հօր եւ որդու երկխօսութիւնը, որ գաղափարների ու համոզումների մի անզիւմ բախում է: Սակայն նշենք, որ հայրն առաջինն է իրենից օտարում որդուն՝ քանի որ հայրական նուիրումից զգացումը որդու հանդէպ մարած է արդէն: Նա առաջինն է խոստանում պատժել իր որդուն: Հօր եւ որդու երկխօսութեան մէջ հայրն ասում է: «Ուրեմն, դու իմ որդին շես: Ով որ նեզ հակառակ է, մեզանից չէ: Մենք անխնայ պատժել գիտենք այնախիին»<sup>13</sup> (ընդգծում իմն է - Ս.Ս.), եւ առաջինն է ձեռքը տանում դէպի սուրբ: Եւ ... սպանում: Սպանում է, քանի որ նրա՝ Հօր մէջ են խախտուած բնութեան եւ Աստծոյ օրէնքները, նրանց տրամարանութիւնը: Իսկ Ահարոնեանը նորից իրաւացի է: «Սպանորինը եւ մանաւանդ ծնողասպանութիւնը, երեւ նա մի գոնիիկ ոճիր չէ, այլ կապուած է մի անխուսափելի տիրական ճակատազրի, ապա նա զոհից աւելի մեր խորունկ կարենցութեան նիւր է դարձնում հարուածողին: Հակառակ դէպրում նա չի կարող ծառայել զեղարուեստին» (10, 35, ընդգծում իմն է - Ս.Ս.):

Ասել է, թէ Ահարոնեանը չի ժխտում ծնողասպանութեան՝ իրեւ ոճրի իրողութիւնը: Հակառակը՝ Նա բազմիցս հաստատում է այդ: Բայց նաև ապացուցում է, յենուելով Ռաֆֆու վէպի ընձեռուած հնարաւորութիւնների վրայ, որ կեանքը, իր յաճախ հանդիպող անմեկնելի ընթացքով, առաջադրում է իրադրութիւններ, եղելութիւններ, երբ զոհից աւելի զոհ է դառնում դահճճ համարուողը, ծնողասպանը: Դա գեղարուեստի ճշմարտութիւնն է՝ երբեմն աւելի ճշմարիտ, քան կենսական ճշմարտութիւնը:

Իսկ որ Ռաֆֆու պատկերած ծնողասպանութիւնը արդէն շուրջ մէկուկէս հարիւրամեակ ծառայում է գեղարուեստին՝ բացարձակ ճշմարտութիւն է:

Ծնողասպանութիւնը, եթէ այն հետապնդում է անձնական շահ կամ որեւէ այլ նպատակ, որ առօրէական է, ոչ-վեհ, առաւելապիս ոճրագործութիւն է: Սակայն, երբ այն կատարուել է յանուն այնպիսի վեհ նպատակի, ինչպիսին Հայրենիքի փրկութիւնն է, ապա վերածւում է անձնազոհութեան, քանի որ այդ դէպրում ոճրագործը ինքն էլ է կորուստ կրում թէ՝

Հոգերանական, թէ՛ կենսական իմաստով։ Սամուէլի պարագարում խնդիրը հենց այս հոդի վրայ է։ Սոփոկլէսի հղիպոսը ոճրագո՞րծ է, թէ՞ ոչ։ Նա ամէն ինչ արեց, խուսափելու համար դաժան բախտի տնօրինութիւնից, բայց ի վերջոյ սպանեց հօրը՝ Լայլսին, ապա ամուսնացաւ մօր հետ հղիպոսը ճակատագրի զոհն է։ Այդպէս եւ Սամուէլը։ Նա ամրող մի յաւերժութիւն (վէպում մէկ տարուց աւելի) պայքարեց այդ դաժան մտքի դէմ, նոյնիսկ հրւանդացաւ վշտից, բայց հանգամանքների անողորմ ընթացքը նրան պարտադրեց ոճրագործութեան՝ յանուն վեհ նպատակի։ Նա անպայման ոճրագական կերպար է, թէեւ ոճիր է գործում, բայց արդարանում է սերունդների առաջ՝ իրբեւ բացառիկ կամք։ Եւ Ահարոնեանն իրաւացի է, երբ փառտում է։ «Ծնողապանութիւնը ինչ պայմաններում եւ լինի, անհնարին դաժան նիր է գեղարտեստի համար. այս հրէշտառ հակարնական ակտի սարսուի տակ արտեստը հեշտութեամբ կարող է դառնալ զօնի, անհրապոյր, վանի։ Արուստը կը տուժի մեծապէս, եթէ հեղինակի տաղանդը անզօր է հայրապանի ձեռքին մղումն տուող հոգերանական գործօնները ոչ միայն վերացնել մարդկային ընութիւնը ընկերու եւ խնդդելու չափ, ապա դէմ շպրտել բոլոր հեռաւոր կամ մօտաւոր կամկածի սոսուներները, գերբնական, զրերէ աստուածային արանարանութեան առջիւրի մէջ մկրտել իր հոգին, ծշմարտութիւնների ծշմարտութեանը յենուել որպէսզի իր հարուածն ընկնի որպէս երկնային վրէժխնդրութիւն, որի մասին երկրի վրայ չեն վիճում, այլ սասանում են։ Եւ այդպիսի ակտից յետոյ ինըը՝ ծնողապանը եւս որպէս մի ճակատագրական քաւութեան նոխազ, որպէս քշուառ գործիք գերագոյն արդարութեան, խորտակում է, փշրում ու ոչնչանում» (10, 356-357, ընդգծումներն իմն են - Ա.Ա.):

Ահարոնեանը միշտ էլ ձգտել է նուաճել իր գրական ուսուցչի աշխարհը, զարգացնել այն։ Օժտուած լինելով վառ երեւակայութեամբ եւ արտասովոր դիտողականութեամբ՝ Ահարոնեանը առանձնացնում է Բաֆֆու հենց այդ յատկանիշները։ Նա համեմատում է Բաֆֆուն եւ պատմագիրներին, ներկայացնում նրանց ընդհանրութիւններն ու տարրերութիւնները՝ ցոյց տալով գեղարուեստագէտ Բաֆֆու առաւելութիւնները։ «Երբ կարդում ես պատմարանների կցկոտոր, յաճախ հակասական եւ միշտ միջն գրոյցները եւ այն պատկերները, որ նրանք ստանում են Բաֆֆի գրչի տակ, անհնարին է չիհանալ հեղինակի նրբամտութեամբ եւ վառ երեւակայութեամբ, որի շնորհի նա այնքան գոլորիկ կերպով ամրողացնում է ու տրամարանական դարձնում գեղարտեստական պատկերների եւ անհատների նկարագիրը» (10, 363, ընդգծումն իմն է - Ա.Ա.):

Հենց անհատների նկարագիրը էլ զարձնում է իր քննութեան նիւթը, ուր մանրամասնօրէն ու քննական ընդունելի մօտեցմամբ է ներկայացնում Փառանձեմի կերպարը, որի ընդհանրացումը աւելին է, քան գրական կերպարի պարզ ու սովորական մեկնութիւնը։ «Ահա այն զարմանալի կինը, որ բռնադատուած է առանց սիրոյ և ատելութեամբ, վերջ ի վերջոյ Արշակ արքայի ծեռն ընդունել, Հայոց Տիկին դառնալ, Հայոց աշխարիի բազու-

իլ: Եւ Փառանձեմ որքան դժբախտ կին է, նոյնքան իմաստուն քազուի է:  
- Սակայն մի չար ճակատազիր է կախուած նրա զիսին, որպէս նզովը, որ-  
պէս Fatum կոյր ու անողորմ, որ պիտի խորուակի նրա քրոնգէ կամքը, նրա  
փայլուն, արկածալից ու մեծ գոյութիւնը: «Փառանձեմը Հայոց աշխարհն  
է, զեղեցիկ, արի, աննկուն ու թշուած միաժամանակ» (10, 364):

Նոյն Հզօր ընդհանրացմամբ է քննուում նաև Մերուժանի կերպարը Ա-  
Հարոնեանը դաւաճանութիւնը չի մեկնում սոսկ իրեւ Հայրենիքի շահերի  
ուրացում կամ վնասաբեր գործունէութիւն: Նա, կարծում եմ, լաւագոյնս  
է ըմբռնել Մերուժանի՝ իրեւ դաւաճանի բաֆֆիական մեկնութիւնը: Ա-  
Հարոնեանը համոզուած է, թե «Մերուժանը, որ իր հայրենիքի առեստի  
զնուն ու օտարի աջակցութեամբ բազաւորել եր ուզում, երկնքի և երկրի օ-  
րէնքներով՝ դաւաճան էր» (10, 365) ուստի եւ չի կարծում, թէ Մերուժանը  
դաւաճան է այն պատճառով, որ փառաէք է ու չահամոյ, եւ որ անյոյս  
կերպով յայտնուել է Շապուհի քրոջ՝ Որմիզդուխստի սիրոյ ոստայնում եւ  
դարձել Շապուհի գործիքը: Նա դաւաճանութիւնը բացատրում է Ժողովր-  
դական ընկայման եւ մեկնարանութեան դիտանկիւնից, ինչպէս հաւանա-  
բար փորձել է ներկայացնել Բաֆֆին: «Ծոլովկուրդ միշտ զերադասում է  
պարտուած արիտրիւնը յարքանակոյ շարութեանը» (10, 365):

ԱՀարոնեանի նպատակը Բաֆֆու՝ իրեւ ամրողջական արժէք ներկա-  
յացնելը չի եղեւ: Ինքն է խոստովանում: «Ծաֆֆիի ամրողջական զրոյի ու-  
ստիմնասիրութիւնը չէ ին նպատակը: Ես կամեայ նրա մի հատիկ երկով  
վեր հանել նրա բանաստեղծական ու վիպական տաղանդի մեծութիւնը,  
որին տակալին մեր մէջ ոչ որ չի զերազանցել» (10, 368):

ԱՀարոնեանի մօտեցումը պատահական չէ: Նա, Բաֆֆուն ներկայաց-  
նելով, նախ ներկայացնում էր իրեն, իր գրականութիւնը: Պատկառելի ժա-  
ռանգութեան տէր ու ճանաչում ունեցող զրոյը՝ ԱՀարոնեանը, կիսում էր  
իր ուսուցչի ճակատագիրը: Խորհրդայնացած Հայրենիքում մերժուած էր,  
եւ նրա նման քիչ հասկացուած, ու հասկացուելն անհրաժեշտ էր: Ոչ իր հա-  
մար: Այլ՝ Համայնի: Եւ պատահական չէ, անշուշտ, գեղարուեստի ու բարո-  
յականի նրա մեկնութիւնը: «Գեղարուեստը ճշմարտութիւնն է, այն, բայց  
կենանքի ճշմարտութիւնը, եւ կենանք իր հետ միշտ արմեստին զուգընքաց  
մի նորալ ունի, որ յարափոխի է ծամանակի ու տարածութեան մէջ: Մորալը  
յարաբերական է, եւ ճշմարտութիւնը, որ բդիում է  
զեղեցկութիւնից, անյեղին է» (10, 369, ընդգծումներն իմն են - Ս.Ս.):

Այս ըմբռնումով է նա մեկնարանում ու արդարացնում Բաֆֆու գրա-  
կանութեան միտումնայնութիւնը: Տաղանդը իր տեսակին հասկանալու եւ  
ներկայացնելու համար կարիք չունի մանրամասն զննելու եւ ներկայացնե-  
լու: Նա իր տեսակին հասկանում է Հեռություն՝ եւ՝ կէս խօսքից: Ինչպէս Թու-  
մանեանը Շեքսպիրին, կամ Գէօթէին, Պուլչինին: ԱՀարոնեանը Բաֆֆուն,  
որ նախ եւ առաջ, իր ուսուցիչն էր, ըմբռնել էր հենց այդպէս՝ կէս խօսքից  
եւ ... Հոգով: Նա Բաֆֆուն իրաւացիօրէն մարգարէ է համարում:

Եւ միանգամայն իրաւացի է իր ընդհանրացնող պնդման մէջ՝ «Ծաֆ-  
ֆին մեր գրականութեան փառի կաղնին է»:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Տե՛ս՝ Աւետիս Աշարոնեան, Օրկերի ժողովածու 10 Հատորով, Հայր. Տանեմբորդ, Բուստին, 1951, էջ 342. Այսուհետեւ սովոր հաստարակութիւնից կատարուած էլլիքերումների կողքին կը նշուի Հատորը և Համապատասխան էլլի:
- <sup>2</sup> Րաֆֆի, Օրկերի ժողովածու 12 Հատորով, Հատոր Աւթերորդ, Երևան, Սովետական Գրու, 1986, էջ 5.
- <sup>3</sup> Նոյն, էջ 6-7.
- <sup>4</sup> Նոյն, էջ 8.
- <sup>5</sup> Նոյն, էջ 8.
- <sup>6</sup> Տե՛ս՝ Րաֆֆի, Օրկերի ժողովածու 12 Հատորով, Հատոր Առաջին (1983), Օրկերորդ (1983), Գրդարար (1984), Հինգերորդ (1985), Վեցերորդ (1986).
- <sup>7</sup> Րաֆֆի, Օրկերի...Հատոր Աւթերորդ, Գիրք Ա. Գլ.Բ., Գիրք Բ. Գլ.Ա., գիրք Գ. Գլ.Ա., Դ.
- <sup>8</sup> Տե՛ս՝ Աշարոնեան, Հայր. Առաջին, Բուստին, Հայրենիք Տպ., 1947, Հայր Հինգերորդ, 1948.
- <sup>9</sup> Միքան մէկ օրինակ: Աշուո Բէշեանիք զայտութեան և կրթութեան նախարարի պաշտօնավարութեան օրերին մամուլուով արձարծուուն էին մտքեր, որոնցում Մամուչիք հերոսի արարքը համեմատուուն էր խորհրդացին գրականութեան մէջ փառարանուող Պաւլիկ Մորոզովի արարքի հետ: Առանց հաշուիք առներով, որ առիտական պիտուկը Մորոզովի կերպարը գաղափարական ուժացման տիպիկ օրինակ էր, իսկ Մամուչիք կերպարը՝ հոգեբանական բարդ անցումներով ձևաւորուած ինքնանուիրումիք կերպարը՝ Րաֆֆուն վերաբրուուն էին պատիկեմորովականութեան քարոզիք դեր: Բանը հասան նրան, որ առաջարկուուն էր դէսով հանել զպոցական ծրագրերց: Ի վերջոյ, առողջ բանականութիւնը յաղթանակեց, և հարցը փակուեց: Աչա այս դիսանկիւնից եւս բաւականին արդիական են հնուուն Աշարոնեանի դիսարկուամերը:
- <sup>10</sup> Յովհաննէս Թումանեան, Օրկերի ժողովածու, Հայր. 8, Երևան, ՀԱՍՀ ԳԱ, 1989, էջ 518:
- <sup>11</sup> Ցիւենք «Երեք Երիտասարդ Ուժեր» գլուխը, Րաֆֆի, Օրկերի...Հատոր Աւթերորդ, էջ 70, կամ «Ալտասուրի Աղրիիը» գլուխը՝ Մամուչիք և Աշունիք երկխօսութիւնը Վահան Մամիկոնեանի մասին:
- <sup>12</sup> Րաֆֆի, Օրկերի...Հատոր Աւթերորդ, էջ 392:
- <sup>13</sup> Նոյն, էջ 456:

RAFFI IN AVEDIS AHARONIAN'S ASSESSMENT  
(Summary)

SERJ SRABIONIAN

Basing his work on the 1924 study about the novelist Raffi by exiled author Avedis Aharonian, Srabionian reveals the aesthetic value system and literary perceptions of Raffi.

The author argues that Aharonian was interested in Raffi not only because he wanted to pay tribute to the 35<sup>th</sup> anniversary of Raffi's death, but also because in newly Sovietized Armenia Raffi's literary heritage was being tarnished. Having witnessed the fate of his own literary heritage, Aharonian tried to defend the most nationalistic/patriotic features of Armenian literature, which were being undermined:

Through skillful observations, which only a true literary critic could make, Aharonian reveals the dark and bright sides of Raffi's work, particularly in his historical novel, *Samuel*. Srabionian draws attention especially to the observations Aharonian made while interpreting the central conflict of the novel, the act of parent-killing, both as a crime and as a daring act. Srabionian agrees with Aharonian's claim that he is unaware of any other Armenian author who could have more successfully portrayed such a complicated psychological clash between parents and their son.